ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » հուլիսի 2018 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-341-15.06.2018-ՖՎ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-341-15.06.2018-ՖՎ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1. 1-ին հոդվածում «հունվարի 30-ի» բառերը փոխարինել «հունվարի 16-ի» բառերով, իսկ «ՀՕ-59-Ն» թիվը՝ «ՀՕ-58-Ն» թվով:

2. 1-ին հոդվածից հանել «հետևյալ բովանդակությամբ» բառերը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները:

3. 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետում «կարծիքը» բառից առաջ լրացնել «ենթակետով նախատեսված» բառերը, քանի որ «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված են ենթակետեր: Հիշյալ դիտողությունը բխում է նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներից:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-341-15.06.2018-ՖՎ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության 2018 թվականի հունվարի 30-ի ՀՕ-59-Ն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«5. Գործունեության ծրագրի երկրորդ մասում ընդգրկված ծրագրային կետի.

1) կատարման արդյունքում կազմված՝

ա. կատարողականի հաշվեքննության ընթացիկ եզրակացությունը ներառում է հաշվետվություն հաշվեքննության առարկայի տնտեսման եւ/կամ նպատակային արդյունավետության եւ/կամ ծախսային արդյունավետության վերաբերյալ.

բ. ֆինանսական եւ համապատասխանության հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունները ներառում են օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետի տեղեկատվությունը եւ 2)-րդ կետի ա. կամ բ. կամ գ. կամ դ. կարծիքը:

2) կատարման արդյունքում կազմված ընթացիկ եզրակացությունը, ըստ անհրաժեշտության, ներառում է՝

ա. գրառում՝ անհամապատասխանություն կամ խեղաթյուրում չհայտնաբերելու մասին.

բ. գրառում՝ անհամապատասխանության կամ խեղաթյուրման վերաբերյալ.

գ. առաջարկություններ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը եւ այլ շահագրգիռ կողմերին.

դ. հաշվեքննության արձանագրությունների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտների ղեկավարների ներկայացրած առարկությունները եւ բացատրությունները.

ե. եզրակացություններ.

զ. այլ տեղեկատվություն: »:

Հոդված 2. Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասում «տարեկան հաղորդումը Ազգային ժողով ուղարկվելուց առնվազն մեկ ամիս առաջ» բառերը փոխարինել « մինչեւ տվյալ տարվա ապրիլի 1-ը» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն գործող օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, ընթացիկ եզրակացության բովանդակությունը բաղկացած է ըստ անհրաժեշտության ներկայացվող բաղադրիչների:

ՀՀ հաշվեքննիչ պալատի մասին օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասում իրականացված փոփոխությունը՝ ընթացիկ եզրակացության բովանդակությունում պահպանելով ըստ անհրաժեշտության ներկայացվող բաղադրիչների վերաբերյալ պահանջը, պարտադիր պահանջներ է սահմանում հաշվեքննության յուրաքանչյուր տեսակի համար:

Մասնավորապես կատարողականի հաշվեքննության համար սահմանվում է , որ՝

կատարողականի հաշվեքննության ընթացիկ եզրակացությունը ներառում է հաշվետվություն հաշվեքննության առարկայի տնտեսման եւ/կամ նպատակային արդյունավետության եւ/կամ ծախսային արդյունավետության վերաբերյալ:

Իսկ ֆինանսական եւ համապատասխանության հաշվեքննության համար սահմանվում է, որ՝

ֆինանսական եւ համապատասխանության հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունները ներառում են օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետի տեղեկատվությունը եւ 2)-րդ կետի ա. կամ բ. կամ գ. կամ դ. կարծիքը:

Գործող օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված են ֆինանսական եւ համապատասխանության հաշվեքննությունների վերաբերյալ ներկայացվող եզրակացության բովանդակությունը:

Գործող օրենքի 26-րդ հոդվածում առաջարկվող փոփոխության արդյունքում ընթացիկ եզրակացությունները՝ կախված իրականացված հաշվեքննության տեսակից կունենան որոշակի ձեւաչափ:

Գործող օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով սահմանվում է, որ մինչեւ հունիսի 1-ը Ազգային ժողով ներկայացվող տարեկան հաշվետվության մեջ պետք է ներառվեն միայն այն ընթացիկ եզրակացությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունները, որոնք Ազգային ժողով են ներկայացվել տարեկան հաղորդումը Ազգային ժողով ներկայացվելուց առնվազն մեկ ամիս առաջ:

Քանի որ եռամսյա ժամկետը բավարար է ավարտված հաշվեքննության վերաբերյալ ընթացիկ եզրակացությունը Ազգային ժողով ներկայացվելու համար, ապա 28-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկվող փոփոխությամբ սահմանվում է, որ Ազգային ժողով ներկայացվող տարեկան հաղորդման մեջ ներառվեն մինչեւ տվյալ տարվա ապրիլի 1-ը Ազգային ժողով ներկայացված ընթացիկ եզրակացությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը: Այս պարագայում Ազգային ժողով ներկայացվող հաղորդման մեջ կներառվեն նույնիսկ դեկտեմբերի վերջին ավարտված հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունները:

Գործող օրենքի 28-րդ հոդվածում առաջարկվող փոփոխության արդյունքում Ազգային ժողովը շուրջ մեկ ամիս ավելի ժամանակ կունենա հաշվեքննությունների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունները քննարկելու համար: